ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«10» մայիսի 2024 թվականի N 784

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ին անցկացվելիք երրորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

•/նախագիծ 44-Ն / Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

•/նախագիծ 45-Ա / Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

1.2. Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ 46-Ա/ Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

1.3.Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ 47-Ա/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

• /նախագիծ 50-Ա/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի աղբահանության սանիտարական մաքրման կառավարման 2024-2028թթ. ռազմավարական պլանը հաստատելու մասին:

• /նախագիծ 51-Ա/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման և գանձման կարգը հաստատելու մասին:

• /նախագիծ 52-Ա/ Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11 և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի, ավտոկայանատեղի և հասարակական նշանակության հատվածամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը համաձայնություն տալու մասին:

• /նախագիծ 53-Ա/ «Սաքշին» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի տարածքում Գյումուշի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:
• /նախագիծ 54-Ա/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող Չարենցավան համայնք Չարենցավան քաղաք 4-րդ թաղամաս 10 Ա շենք թիվ 4/1 հասցեում գտնվող գույքը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
• / նախագիծ 55-Ա/ Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի թիվ 26-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
•/նախագիծ 56-Ա/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
•/նախագիծ 57-Ա/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

1.4 Համայնքի զարգացման ռազմավարության և ծրագրերի մշտական հանձնաժողով

•/նախագիծ 52-Ա/ Չարենցավան համայնքի Երիտասարդության փողոց 6/11 և 6/12 հասցեների հողամասերում բազմաֆունկցիոնալ համալիրի՝ բազմաբնակարան բնակելի մասնաշենքի, ավտոկայանատեղի և հասարակական նշանակության հատվածամասի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը համաձայնություն տալու մասին:
•/նախագիծ 53-Ա/ «Սաքշին» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական բնակավայրի տարածքում Գյումուշի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:
1.5. Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով՝
• /նախագիծ 48-Ա / Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 103-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
•/նախագիծ 49-Ա/ Չարենցավան համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**